

8457



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմոնյան

«30» 07 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 142 - 24

Նախաձեռնող՝

«ԼԱՊԻՍ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ

ք. Երևան, Ավան, Նարեկացի թղմ. 40/26

Գործունեությունը՝

Գյուղնուշի բազալտի հանքավայրի
արդյունահանում

Կոփայքի մարզ

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 142 - 24

«30» հոգիսի 2024թ.

Կոտայքի մարզի Գյումուշի բազալտի հանքավայրի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝

«ԼԱՊԻՍ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ

Ներկայացված նյութեր՝
Գործունեության տեսակը՝

Շրջակա միջավայրի վրա ազդեցության
գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթղթեր
/Ա կատեգորիա/

Գտնվելու վայրը՝

Կոտայքի մարզ, Չարենցավան համայնք,
Արզական բնակավայր

Ներածական մաս. Գյումուշի բազալտի հանքավայրը վարչական առումով գտնվում է Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Արզական բնակավայրի վարչական տարածքում: Հայցվող տարածքի հեռավորությունը Չարենցավան, Քարաշամբ, Ալափարս, Թեղեհիք և Արզական բնակավայրերի մոտակա բնակելի տարածքներից կազմում է համապատասխանաբար՝ 1.7 կմ, 1.9 կմ, 2.2 կմ, 2 կմ և 2.5 կմ: Տեղամասը տեղակայված է 1493 մ-1523 մ բացարձակ նիշերի վրա:

Հայցվող տարածքի հողերի նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական է:

Նախատեսվող գործունեությունը, հանդիսանում է Ա կատեգորիայի գործունեության տեսակ՝ համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (ՀՕ-110-Ն) 14-րդ հոդվածի 4-րդ մասի 2)-րդ կետի գ. ենթակետի:

Նկարագրական մաս. Կոտայքի մարզի Գյումուշի բազալտների հանքավայրի պաշարները հաստատվել են 01.01.1969 դրությամբ, ՀՍՍՀ Մինիստրների Խորհրդի ՊՏՀ-ի 1973 թվականի ապրիլի 20-ի №189 արձանագրությամբ: Բազալտներն իրենց ֆիզիկամեխանիկական հատկություններով ապահովում են շինարարական աշխատանքների՝ շինաքարերի, խամքարերի արտադրությանը բավարարող 100-62 ՀՍՀ-ի պահանջներին, կարող են օգտագործվել նաև որպես խիճ՝ բետոնի համար:

Բացահանքը վերջնական դիրքում կունենա հետևյալ պարամետրերը՝

- ամենամեծ երկարությունը՝ 920 մ,

- ամենամեծ լայնությունը՝ 249 մ,



- ճգտակար հանածոյի մարվող պաշարները՝ 2863.9 հազ.մ³,
 - արդյունահանվող պաշարների քանակը՝ 2443.5 հազ.մ³,
 - մակաբացման ապարների քանակը՝ 249.7 հազ.մ³,
 - բացահանքի օտարման մակերեսը՝ 15.616 հա:
- Հայցվող տարածքը եզրագծվում է ARM WGS-84 համակարգի հետևյալ կոորդինատներով՝

1. X=4474688.00	Y=8466437.00
2. X=4474685.00	Y=8466448.00
3. X=4474664.00	Y=8466467.00
4. X=4474556.00	Y=8466545.00
5. X=4474494.00	Y=8466613.00
6. X=4474476.00	Y=8466629.15
7. X=4474398.00	Y =8466679.00
8. X=4474329.11	Y=8466749.81
9. X=4474254.00	Y =8466791.00
10. X=4474215.00	Y=8466828.00
11. X=4474086.00	Y=8466927.00
12. X=4473937.00	Y=8466999.00
13. X =4473968.00	Y=8466890.00
14. X =4474043.00	Y=8466765.00
15. X =4474212.00	Y=8466575.50
16. X =4474473.00	Y=8466320.00

Բացահանքում մակաբացման ապարները 249700 մ³ ընդհանուր քանակով ներկայացված են հողաբուսական շերտով, դեյուվիալ բերվածքներով՝ բազալտների տարաչափ բեկորներով խառը, և հողմնահարված ջարդոտված բազալտներով: Դրանց միջին հզորությունը 1.6մ է:

Հողաբուսական շերտը 1-9-րդ տարիների ընթացքում ավտոինքնաթափով կտեղափոխվեն բացահանքի սահմաններում, նրա հարավ արևմտյան մասում ձևավորվող ժամանակավոր ներքին N1 լցակույտ, մակաբացման ապարները, դեյուվիալ բերվածքները և ջարդոտված հողմնահարված բազալտները N2 լցակույտ, հետագայում արդյունահանման ընթացքում բացահանքի բացված հատակների վրա՝ դրանց վերականգնման նպատակով: Լցակույտի միջին բարձրությունն է 16.5 մ:

Շահագործման 9-րդ տարվանից սկսած, բացահանքի 1504.0մ բարձրության հորիզոնը մինչև հատակը մշակելուց հետո մակաբացման ապարներն աստիճանաբար կտեղափոխվեն այդ հանքաստիճանի վրա: Հաջորդ բացված հանքաստիճանների վրա կտեղափոխվի նաև բացահանքի հարավ-արևմտյան մասում ձևավորված ժամանակավոր լցակույտի ապարները, կլցվեն միջինը 1.7 մ բարձրությամբ և կհարթեցվեն: Սկզբում կտեղափոխվեն և կլցվեն N2 լցակույտի ապարները, որոնց վրա կլցվի N1 լցակույտում կուտակված հողաբուսական շերտը և կհարթեցվի:

Մինչ շահագործման ավարտը՝ կտեղափոխվի 241000 մ³ մակաբացման ապարներ, իսկ շահագործման ավարտից հետո 8700 մ³, որում (նախօրոք տեղափոխվել է 14895 մ բարձրության



հորիզոնի վրա), ինչ էլ կտեղափոխվի բուլդոզերով բացված հանքաստիճանի վրա շահագործման ավարտից հետո ռեկուլտիվացիայի ժամանակ:

Հանքարդյունահանման աշխատանքների համար նոր ճանապարհներ չեն կառուցվելու: Օգտագործվելու են գոյություն ունեցող ճանապարհները, որոնք ընթացքում կբարեկարգվեն:

Բացահանքի մատակարարումը տեխնիկական ջրով կատարվելու է օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների ժամանակ փոշեդադարեցման, աշխատանքային հրապարակների, ճանապարհների և լցակույտերի ջրման նպատակով: Ջուրը բերվելու է ջրցանվացող մեքենայով: Խմելու ջրի մատակարարումը կատարվելու է ՍՊ-ԵԼԵ-1.4 ջրի ցիստեռնով: Հանքավայրի հիդրոերկրաբանական պայմանների համաձայն, գետնաջրերը բացակայում են: Հետևաբար բացահանքում ջրհեռացնող կառուցվածքներ չեն նախատեսվում: Անմիջապես բացահանքի տարածք թափվող անձրևային ջրերը հեռացվում են ինքնահոս կերպով և ներծծվում ճաքերի միջով:

Բացահանքի շահագործման ընթացքում առաջանալու են բնապահպանական տեսակետից տարբեր վտանգավորության թափոններ, որոնցից են՝ մակաբացման ապարները, մեքենաներում ու մեխանիզմներում փոխվող օգտագործված յուղերը, մաշված դետալների փոխարինման ժամանակ առաջացած մետաղի ջարդոնը, մաշված ավտոդողերը ու կենցաղային աղբը:

Բացահանքի լեռնատեխնիկական և կենսաբանական վերականգնումներն իրականացվելու են բացահանքի շահագործման ընթացքում՝ փուլերով:

Հանքարդյունահանման աշխատանքների հետևանքով խախտված հողերի վերականգնման էությունը կայանում է խախտված հողերի բացահանքի վերականգնումը՝ այդ նպատակի համար արտաքին լցակույտերից հողի կամ ապարների տեղափոխումը, դրանց փռումը և մակերևույթի հարթեցումը: Տեխնիկական ռեկուլտիվացիայից հետո, կիրականացվի կենսաբանական ռեկուլտիվացիա, որի ընթացքում կվերականգնվի կամ կստեղծվի բուսական ծածկ: Ռեկուլտիվացիայի ենթակա մակերեսը կազմում է 15.6 հա:

Ընդամենը ռեկուլտիվացիայի ծախսերը կկազմեն՝ 7661500 ՀՀ դրամ, որից կենսաբանական ռեկուլտիվացիայի համար նախատեսված ծախսը՝ 2079000 ՀՀ դրամ:

Ըստ հաշվետվությունում ներկայացված տեղեկատվության՝ տեղամասի տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված տեսակներ չեն արձանագրվել:

Հանքավայրի տարածքում բնության հուշարձաններ հաշվառված չեն, պատմության և մշակույթի հուշահամալիրներ չկան:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- տաք և չոր եղանակին արտադրական հրապարակի, բացահանքի, լցակույտերի, մերձատար ճանապարհների ջրցանում՝ օրը երեք անգամ, ինչը թույլ կտա կրճատել փոշու արտանետումները,
- տեխնիկա-տրանսպորտային միջոցները շահագործել սարքին վիճակում, կատարել պլանային տեխնիկական ստուգումներ: Դիզելային շարժիչները ցանկալի է ունենան կլանիչներ,
- պահեստները պետք է մշտապես վերահսկվեն՝ բացառելու համար վառելիքի և յուղերի պատահական արտահոսքը,
- օգտագործված յուղերը հավաքվելու են մետաղյա տակառներում և պահպանվելու են հատուկ առանձնացված տեղերում,



- անաջացած թափոնները /անօգտագործելի յուղեր և ավտոդողեր/ հավաքել և վաճառել լիցենզավորված ընկերություններին,
- հողի բերրի շերտը հանել և պահպանել ծածկված վիճակում՝ բացառելով դրանց աղտոտումը,
- բացառել տեխնիկա-տրանսպորտային միջոցների երթևեկությունը ճանապարհներից ու արտադրական տարածքներից դուրս,
- կատարել շարժիչների պարբերական ստուգումներ և կարգաբերում,
- իրականացնել գործունեության տարածքում կենսաբազմազանության մշտադիտարկում,
- կենցաղային աղբի հավաքվելու է հատուկ տեղադրված աղբամաններում և համապատասխան ծառայության կողմից պարբերաբար տեղափոխվելու է համայնքի աղբավայր,
- խախտված տարածքների ռեկուլտիվացիա:

Հանքավայրի շահագործման ընթացքում իրականացվելու են շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

- մթնոլորտային արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ,
- մակերևութային ջրերի մշտադիտարկումներ՝ շաբաթական մեկ անգամ արտահոսքերի առաջացման դեպքում,
- ստորերկրյա ջրերի մշտադիտարկումներ՝ ամսական մեկ անգամ հայտնաբերման դեպքում,
- հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ տարեկան մեկ անգամ հաճախականությամբ,
- վայրի բնության, կենսամիջավայր, կարմիր գրքում ընդգրկված, էնդեմիկ տեսակների մշտադիտարկումներ՝ տարեկան մեկ անգամ հաճախականությամբ,

Բնապահպանական և մոնիթորինգի միջոցառումների ընդհանուր գումարը կկազմի՝ 1950000 ՀՀ դրամ, որից շահագործման փուլերի համար 1030000 ՀՀ դրամ՝ մոնիթորինգի տարեկան ծախսերն են:

Պատճառաբանական մաս. Օրենսդրությամբ սահմանված կարգով, փորձաքննության ընթացքում, Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Արզական բնակավայրում անցկացված հանրային քննարկման ընթացքում գործունեության իրականացումը տեղական ինքնակառավարման մարմինների և մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Հաշվետվության վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ ներքին գործերի, առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, կադաստրի կոմիտեից, Կոտայքի մարզպետարանից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից:

Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել հայտի լրամշակումներում:

Ամփոփելով հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք կառաջանան նախատեսվող գործունեության աշխատանքների իրականացման արդյունքում, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:



Փորձաքննական պահանջներ

Հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի 191-Ն որոշման պահանջներով, շրջակա միջավայրի բաղադրիչների /մթնոլորտային օդ, հողային ծածկույթ, կենսաբազմազանություն/ մշտադիտարկումների արդյունքների տարեկան հաշվետվությունը նշված որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել լիազոր մարմին:

-Հանքավայրի շահագործման ընթացքում անհրաժեշտ է ապահովել և պահպանել բնապահպանական կառավարման պլանում և մշտադիտարկման ծրագրում նախատեսված միջոցառումների իրականացումը:

- Անհրաժեշտ է ապահովել հաշվետվությունում ներկայացված ռեկուլտիվացիան:

-ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմնին՝ համապատասխան պահպանման միջոցառումներ իրականացնելու համար:

ԵԶՐԱՓՈՒԿ ԿԻՉ ՄԱՍ

«ԼԱՊԻՍ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Կոտայքի մարզի Գյումուշի բազալտի հանքավայրի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ



Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ՝



Հովիկ Մեսրոպյան